ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԵՂԱՊԱՀ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԱԼԵՔՍԻՈՒ ՆԱՄԱԿԸ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՇԱԼ

# Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ

*Թանկագին ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ.*

Մեր ուղղափառ եկեղեցուն հանկարծ ծանր փորձություն վիճակվեց։ Վախճանվեց պատրիարք ՍԵՐԳԻՆ, որ 18 տարի կառավարում էր Ռուսական եկեղեցին։

Ձեզ լավ հայտնի է, թե ինչպիսի իմաստությամբ էր նա կատարում այդ դժվարին աշխատանքը։

Ձեզ հայտնի է նաև նրա սերը դեպի Հայրենիքը, նրա հայրենասիրությունը, որը ոգևորում էր նրան պատերազմական փորձությունների ներկա դարաշրջանում։ Իսկ մեզ, նրա մերձավոր օգնականներս, մոտիկից հայտնի է նաև նրա ամենաանկեղծ սիրո զգացմունքը դեպի Ձեզ և նվիրվածությունը Ձեր նկատմամբ, որպես մեր Մեծ Միության ժողովուրդների իմաստուն, Աստծո կողմից կարգված առաջնորդի (այս նրա մշտական արտահայտությունն է)։ Այդ զգացմունքը նրա մեջ առանձնահատուկ ուժով դրսևորվեց Ձեզ հետ անձամբ ծանոթանալուց հետո, անցյալ տարի սեպտեմբերի 4-ին Ձեզ հետ մեր ունեցած մեզ համար անմոռանալի տեսակցությունից հետո։ Ինձ բազմիցս վիճակվել է նրանից լսելու, թե նա ինչպիսի ջերմ զգացմունքով էր վերհիշում այդ տեսակցության մասին և թե ինչպիսի բարձր, պատմական նշանակություն էր տալիս նա եկեղեցական կարիքների նկատմամբ Ձեր կողմից ցուցաբերված, մեզ համար խիստ արժեքավոր ուշադրությանը։

Նրա մահով մեր եկեղեցին որբացավ։ Վախճանված պատրիարքի կտակով Աստված ինձ չնորհեց իմ վրա ընդունելու Պատրիարքի Տեղապահի պաշտոնը։

Ինձ համար կյանքիս մեջ և եկեղեցուն ծառայելու այս ամենապատասխանատու պահին ես պահանջ եմ զգում Ձեզ, Թանկագին ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, հայտնելու նաև իմ անձնական զգացմունքները։

Իմ առաջիկա գործունեության մեջ ես շարունակ և անշեղորեն կղեկավարվեմ այն սկզբունքներով, որոնցով նշված էր հանգուցյալ Պատրիարքի եկեղեցական գործունեությունը՝ հետևել եկեղեցական կանոններին և որոշումներին մի կողմից, և մշտական հավատարմություն ցույց տալ Հայրենիքին ու Ձեր գլխավորած մեր Կառավարությանը, մյուս կողմից։

Գործելով Ռուսական Ուղղափառ եկեղեցու գործերի խորհրդի հետ լիովին միաբան ես հանգուցյալ Պատրիարքի հիմնած Սրբազնագույն ՍԻՆՈԴԻ հետ միասին երաշխավորված կլինեմ սխալներից և անճիշտ քայլերից։

Խնդրում եմ Ձեզ, մեծարգո և թանկագին ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ, իմ այս հավատարմագրումներն ընդունել այնպիսի վստահությամբ, ինչպես նրանք բխում են ինձանից և հավատալ Ձեր նկատմամբ մեր տածած խորին սիրո և երախտապարտության զգացմունքներին, որոնցով տոգորված են բոլոր այժմվանից իմ կողմից ղեկավարվող եկեղեցական աշխատողները։

ԱԼԵՔՍԻ

Լենինգրադի և Նովգորոդի Միտրոպոլիտ
Պատրիարքի տեղապահ

Մոսկվա, 19 մայիսի 1944 թ.
(«Սովետ. Հայաստան»)